

**ՀԱՄԱՇԱԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄ: ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ՊԱՏՃԱՊՈՒԹԵ՞ ԿՆԵՏԵՎԱՆՔ
Ներսիսյան Ա. Հ.**

Հոդվածում քննարկվել է COVID-19 համավարակի ազդեցությամբ առկա և սպասվող համաշխարհային ճգնաժամի բնույթը և պատճառահետևանքային կապերը: Վերլուծվել են Աշխարհի նկատմամբ քաղաքական, տնտեսական, մաշկության ժամանակակից պատկերացումները և դրանց փոփոխության հնարավոր տրամաբանությունը:

Հատեգատության արդյունքում ստացված առաջարկություններն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել և կիրառվել պետական քաղաքականության ոլորտում:

Բանալի բառեր. համաշխարհային ճգնաժամ, լիբերալիզմ, աշխարհաքաղաքականություն, աշխարհատնտեսություն, հասարակության մշակութային, «Նոր աշխարհ»:

Աշխատանքի նպատակն է համաշխարհային ճգնաժամի պատճառահետևանքային կապերի քննարկման համար գիտական բանավեճի նոր հարթություն սահմանելը:

Ակնհայտ է, որ հետազոտական նման խնդրի առաջադրումն առավել քան արդիական է, քանի որ ժամանակակից աշխարհը փոխվում է մեր աչքի առաջ: Հետևաբար, ժամանակի հրամայականն է՝ գիտական մեթոդաբանությամբ քննարկել փոփոխվող աշխարհի տրամաբանությունը:

Հետազոտական խնդիրներ: Համաձայն առաջադրված նպատակի՝ դրվել և լուծվել են ներքոհիշյալ հետազոտական խնդիրները՝

- վերլուծել համաշխարհային ճգնաժամի պատճառահետևանքային կապերը,

- քննարկել համաշխարհային հասարակարգի քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում առկա հայեցակարգերը և խնդիրները,

- դիտարկել Նոր Աշխարհի առաջացման հիմքերը:

Հետազոտության մեթոդաբանությունը կառուցվել է քաղաքակրթական մոտեցման վրա, որն առավելագույնս է ապահովում սինթեզիկվմի պահանջները: Իսկ վերջինիս հնարավորություններից օգտվելն ուղղակի թելադրված է հետազոտական խնդրի բարդությամբ և բազմաշերտությամբ:

2020 թվականի առաջին կիսամյակում համաշխարհային հասարակությունը կանգնեց խորքային ճգնաժամի առաջ: COVID-19 կոչվող համավարակի արագ տարածումը և դրա կանխարգելման համար կիրառված աննախադեպ (բառի բուն, ուղղակի և փոխաբերական իմաստներով) միջոցառումները մարդկային հասարակության բնականոն ընթացքը կաթվածահար արեցին: Սակայն ամբողջ խնդիրը այն է, թե արդյո՞ք համավարակն էր պատճառ նման կոլապսի, թե՞ մարդկությունն էր հասել այնպիսի ճգնաժամային հանգրվանի, որ համավարկը սոսկ առիթն էր: Այսինքն՝ համավարկն իրականում ախտահարեց տիրապետող հասարակարգի արդեն սպառված և հիվանդ տարրերը: Հետևաբար կրկին հարց է առաջանում՝ արդյո՞ք համավարակը չի կատարում անհրաժեշտ «սանիտարի» դեր՝ ապագա Նոր Աշխարհի կառուցման ճանապարհին: Եվ վերջին հարցը. մարդկությունը պատրա՞ստ է ճգնաժամը հաղթահարելու համակարգի սպառված տարրերի արմատական վերափոխումով, ըստ այդմ՝ ամբողջովին նոր համակարգ կառուցելով, թե՞ լուծումները լինելու են հին տրամաբանությամբ և ժամանակավոր: Եվ արդյո՞ք այդ պարագայում արդեն ոչ համավարակային ճգնաժամային ալիքներ չեն լինելու:

Վերոհիշյալ հարցերի պատասխանները փորձենք կառուցել ներքոհիշյալ տրամաբանական հիմքով:

Նախ՝ որպես էլակետ ընդունեք ժամանակակից մասնագետների այն պնդումը, որ համաշխարհայնացման ազդեցությամբ համամարդկային քաղաքակրթությունն արդեն ձևավորվել է որպես մեկ ամբողջական համակարգ, որին հատուկ է ինչպես միասնական ճակատագրի ընկալումը, այնպես էլ համակարգաստեղծ տարրերի ընդհանրությունը:

Հետևաբար համավարակը, որն առաջացրեց համակարգային ճգնաժամ, պարզապես չի կարող լինել հիմնական պատճառը: Այն ընդամենն առիթն էր և ախտահարեց համակարգաստեղծ հիմնային այն բաղադրիչները, որոնք սպառվել էին և արգելակում էին բնականոն զարգացումը: Միայն այս պարագայում է, որ մեկ երևույթը, մեկ գործոնը կարող է առաջացնել համակարգային ճգնաժամ:

Հետևաբար, առավել քան իրատեսական է այն պնդումը, որ պատճառահետևանքային կապերի տրամաբանության մեջ համավարակը սուկ հետևանք էր ճգնաժամում հայտնված համակարգաստեղծ բաղադրիչների վերջնական ախտահարման և համակարգային ճգնաժամ «ապահովելու» շղթայում:

Իսկ որո՞նք են համակարգաստեղծ արդեն սպառված բաղադրիչները, որոնց զարգացման ներկա հանգրվանը պատճառ դարձավ համակարգային ճգնաժամի: Այս հարցի պատասխանի համար պետք է դիտարկել Աշխարհի ժամանակակից իրողությունները պայմանավորող քաղաքական, տնտեսական և մշակութային ստիբիլիզացիայի հայեցակարգերը:

Ըստ այդմ՝ պետք է փաստել, որ աշխարհում այսօր ստիբիլիզացիայի աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհամշակութային օրակարգերը կառուցվում, պարտադրվում էին արևմտյան քաղաքակրթության¹ արժեքային հենքի վրա, որտեղ առանցքայինը լիբերալիզմն է: Հետևաբար ճգնաժամի(երի) պատճառը պետք է փնտրել վերջինիս համակարգաստեղծ, հիմնային դրույթների սպառվածության մեջ: Մեր կարծիքով՝ դրանք հետևյալ առնացքայիններն են. քաղաքականության մեջ՝ հաղորժողականություն և ժողովրդավարություն, տնտեսության մեջ՝ պահանջարկ-առաջարկի ժամանակակից բնույթ և դրա հիմքով շուկայական հարաբերությունների ապահովում, մշակութային ոլորտում՝ մարդ-անհատի իրավունքներ:

Լիբերալիզմն իր գոյության ավելի քան 300 տարվա ընթացքում տեսել և հաղթահարել է բազմաթիվ ճգնաժամեր: Դա հաջողվել է հենց մատնանշված դրույթների վերաբերման, վերալիցքավորման և նորովի մեկնաբանման միջոցով՝ լիբերալիզմի տարբեր հոսանքների շնորհիվ: Արդյուքնում, հանդուրժողականությունը, ժողովրդավարությունը, տնտեսության ազատականացումը, մարդու իրավունքները

¹ Եզրույթը կիրառում ենք ստիբիլիզացիայի մոտեցումներից ելնելով: Գիտատեսական նոր մոտեցումը այն լուրջ քաղաքակրթությունների քրիստոնեական ստիբիլիզացիայի շերտի՝ Արևմտաքրիստոնեական ավանգարդային տիպն է: [1,2]

բացարձակացվել և ծայրահեղականացվել էին: Նրանք այլևս ունակ չեն (չէին) դիմակայելու ռեալ ճգնաժամերի: Իհարկե, թվարկվածները միակը չեն, բայց մեր կարծիքով կարևորագույններն են և կարող են ապահովել հասարակական-գիտական բանավեճի անհրաժեշտ բազա:

Եվ այսպես, **քաղաքական ոլորտում** դա առաջին հերթին հանդուժողականության գաղափարախոսության ծայրահեղականացումն էր: Այն, որ հանդուժողականությունը պետությունների ներքին և արտաքին քաղաքականության մեջ պետք է ունենա բավականին ծանրակշիռ դեր և պետք է չեզոքացնի ազգայնամոլության, ցեղասպանության ցանակացած դրսևորում, դա արքունիա է: Սակայն դա ծայրահեղականացվեց ազգային ինստիտուտների, ազգային պետությունների, նրանց սահմանների և գործառույթների հաշվին: Փորձ էր կատարվում հանդուժողականությամբ փաթեթավորված՝ իսպառ «ջնջել» ազգային պետությունների սահմանները, որի տեխնիկական հնարավորությունն ապահովում էր գլոբալիզացիան: Միջազգային հարաբերություններում քաղաքական ինտեգրացիան դարձել էր ոչ թե բնական, այլ ինքնանպատակ գործընթաց, պետությունների վարկանիշավորման, նրանց վարքագծի վերահսկման կարևորագույն գործիք: Ավելին, պետությունները տարբեր կոնվենցիաների միջոցով հրաժարվում էին սեփական գործառույթներից՝ դրանք կամովին զիջելով վերպետական կառույցներին և վերազգային ընկերություններին: «Աշխարհն առանց սահմանների» կարգախոսն ուներ դոմինանտ դեր և իրացվում էր ազգային ինքնության, ազգային պատկանելիության տոտալ ոչնչացման հիմքով: Հանդուրժողականության ծայրահեղականացման միջոցով դաստիարակվում էին քաղաքացիներ, որոնց մոտ ինքնությունն ու գիտակցությունը ստորադասված էր կարգապահությանն ու ենթարկվածությանը: Արդյունքում, քաղաքական նման մշակույթ թելադրող տարածաշրջաններում խիստ սահմանափակվել էր ազգային պետությունների գործառույթային կենսունակությունը, որն «առաջադիմական» էր համարվում և պարտադրվում մնացած աշխարհին:

Համավարակը ցույց տվեց նաև տիրապետող քաղաքական մշակույթի ողնաշարի՝ ժողովրդավարության թույլ կողմերը կենտրոնաձիգ հզոր իշանությունների նկատմամբ: 1,5 մլրդ բնակչություն ունեցող Չինաստանը՝ որպես համավարակի էպիկենտրոն, կարողացավ խնդիրը շատ ավելի արագ լուծել, իսկ տոտալիտար ռեժիմներ ունեցող երկրները՝ Ռուսաստան, Բելոռուս, Կուբա, ոչ միայն նվազագույնը

տուժեցին, այլն հանդուրժողականության, միջազգային օգնության օրինակ ցույց տվեցին: Սասանվեց այն տեսակետի հիմքերը, որ ժողովրդավարությունը բացարձակապես ապահովում է անհատի անվտանգությունը: Գործնականում պարզ դարձավ, որ ժողովրդավարացման ծայրահեղականացումն իշխանության կարող է բերել ոչ կոմպետենտ, ոչ պատասխանատու ամբոխավարների:

Այս ամենի արդյունքում համավարակի ճգնաժամի ժամանակ որպես արագ արձագանքման բնագոյային դրսևորում կոշտացվեցին ազգային պետությունների սահմանները և նորովի վերագործարկվեցին պետական ինստիտուտներն ու կառույցները: Մեկուսացված երկրներում նկատելի էր(ե) ազգային տրամադրությունների, ազգային կոնսիլիդացիայի հիմնավոր դրսևորումներ, որոնք նախկինում խստորեն դատապարտվում էին և համարվում լյուսպեն խավի, հետադիմական աշխարհայացքի «ախտանիշ»:

Ըստ այդմ՝ ապագայում ազգային նույնականացման, ազգային պետությունների դերի վերաբժնորման տրամադրությունները կուժեղանան: Ամեն դեպքում քաղաքական մշակույթի ամբողջական վերագործարկման (ռեստարտի) հնարավորությունը բավականին բարձր է և ապագա միջազգային հարաբերություններում կդառնա փստարկման կարևորագույն գործիք: Սակայն այստեղ կա նաև մեկ այլ վտանգ: Տիրապետող քաղաքական մշակույթի առանցքների արագ արժեզրկումը կարող է բերել քառսի, դատարկության, որը կարող է լցվել ազայնամոլությամբ և տոտալ ռեժիմներով: Այսինքն՝ կարող ենք ականատես լինել քաղաքական մշակույթի ծայրահեղականացման մյուս դրսևորմանը: Վերջինիս բացառումը նույնպես կդառնա միջազգային քաղաքական օրակարգի կարևորագույն մաս:

Տնտեսական ոլորտում առաջին հերթին «ախտահարվեց» տիրապետող ազատականացման գաղափարները: Այստեղ առաջին հարվածը կրեց առողջապահական ոլորտը, որի զարգացածության ցուցիչը նույնպես լիբերալզիմի պարզ սկզբունքներն էին՝ առաջարկ-պահանջարկի հիմքով շահութաբերության ապահովում: Արդյունքում, անընդհատ օպտիմալացումները, բուժանձնակազմի և մահճակալների կրճատումները, ֆինանսավորման մեջ մասնավոր սեկտորի բարձր ներգրավվածությունը ցույց տվեց, որ լիբերալ առողջապահությունն ի վիճակի չէ դիմակայել փոքր-ինչ ավել ծանրաբեռնվածության: Համավարակի տարածումը կանխարգելող կոշտ միջոցառումների

նպատակը հենց փլուզվող առողջապահական համակարգը վերջնական ոչնչացումից փրկելն էր:²

Այն, որ համավարակը համաշխարհային տնտեսական խորը ճգնաժամ է առաջացնելու, դա արդեն ոչ մեկի մոտ կասկած չի հարուցում: Առաջադրվող ցանկացած վատատեսական սցենար մի քանի օրերի ընթացքում համարվում է արդեն լավատեսական և թարմացվում է առավել հոռետեսական կանխատեսումներով: Հետևաբար, այս պահին խոսել տնտեսական ճգնաժամի հաղթահարման մեխանիզմների մասին ուղղակի անհնար է, քանի որ համաշխարհային տնտեսական ճգնաժամը գտնվում է ազատ անկման մեջ, որի դադարը դեռ նկատելի չէ [7]:

Մակայն, ըստ մասնագետների, համավարակը միայն արագացրեց համաշխարհային տնտեսության փլուզման և նորովի վերակառուցման հեռանկարը, քանի որ գոյություն ունեցող տնտեսական պատկերացումներն ու իրողություններն արդեն ստեղծել էին տնտեսական խորքային ճգնաժամի համար բավականին կայուն բազա:

Առկա խնդիրներից մենք շեշտադրենք հետևյալները՝ առաջարկ-պահանջարկի արհեստական ստիմուլացում և գերսպառող հասարակության ձևավորում, կուտակված ազատ կապիտալով ֆոնդային բորսաների գերտաքացում և «տնտեսական փուչիկների» ձևավորում, որոնց պարբերական պայթյունը փոխարինեց տնտեսական զարգացման բնական ցիկլերին, երրորդային սեկտորի անհամաչափ զարգացում՝ առաջնային և երկրորդային սեկտորների նկատմամբ [4]:

Մասնագետների դիտարկմամբ. «...Տնտեսության մեջ ամեն ինչ հիմնված է աճի գաղափարի վրա: Տնտեսական աճերը տեղի են ունենում այդ ավելցուկային սպառման արդյունքում: Մարդուն իրականում պետք չէ սպառողական այս բուկետը, բայց դա է հիմքն այսօրվա աշխարհի տնտեսական աճի: Ցանցային կազմակերպությունները, կոնցեռնները, բոլոր այդ գիգանտները կարողանում են իրենց գոյությունը պահպանել և մի բան էլ աճել հենց այդ ավելցուկային (արատավոր) սպառողականության հաշվին: Իսկ ամբողջ աշխարհի կառավարությունների հիմնական նպատակն է դարձել խթանել սպառողականությունը և ապահովել այդ տևական տնտեսական աճը, որից էլ կախված է նաև իրենց կարիերան և հաջողությունը:

² Արդեն առկա են COVID-19 համավարակի տարածման ժամանակ կանխարգելող միջոցառումներից կախված առողջապահական համակարգերի արձագանքման և գոհերի թվի միջև կապի մաթեմատիկական մոդելավորման բավականին խորը հետազոտություններ [9]

Իհարկե, անհնար էր դա անել, եթե չլիներ այդ սպառողականության կրակի մեջ անընդհատ վառելիք ավելացնող ֆինանսաբանկային համակարգը. ֆինանսական շուկաները և դրանց գործիքները թույլ են տալիս կապիտալն անընդմեջ բազմապատկել՝ ստեղծելով ֆինանսական փուչիկներ, իսկ բանկային համակարգը հնարավորություն է տալիս մարդուն, չունենալով համապատասխան միջոցներ այսօր, սպառել ապագայի միջոցները՝ դրանով իսկ ապահովելով այսօրվա համար սպառողականության (տնտեսական) աճ:³

Այսօր հենց իրենք՝ նեոլիբերալներն են մատնանշում գլոբալ փոփոխությունների անհրաժեշտությունը և համաշխարհային տնտեսությանը սպառնացող մարտահրավերների բնույթը:⁴ Ըստ նրանց՝ լիբերալիզմը նախկինում էլ հանդիպել է նման ճգնաժամերի, բայց միշտ դուրս է եկել ավելի ուժեղ: Սակայն այսօր ճգնաժամն ավելի լուրջ է, քանի որ նախկինում լիբերալները կարողացել են հասարակության խնդիրներին առաջարկել արդյունավետ լուծումներ, իսկ այսօր՝ ոչ:

Ըստ այդմ՝ մարդկությունը պետք է հիմա լուծի այս խնդիրը՝ ստեղծի աշխարհի համար «նոր պատմություն»: Ինչպես արդյունաբերական հեղափոխության ընթացքում առաջ եկան նոր գաղափարախոսություններ, այնպես էլ տեղեկատվական և կենսատեխնոլոգիական ոլորտում սկսված և շարունակվող փոփոխությունները պահանջ են դնում տնտեսական բոլովին նոր տեսության [10]:

Մշակութային ոլորտում, ինչպես արդեն նշել ենք, սկսված ու խորացող ճգնաժամը արտահայտվեց «մարդու իրավունքներ» հասկացության գերծայրահեղականացման պատճառով: Նկատենք, որ ընդհանրապես տիրապետող լիբերալիզմի արժեքային հենքը ձևավորվել է անհատի հիմնարար իրավունքների՝ կյանքի, ազատության և մասնավոր սեփականության վրա: Սակայն ժամանակի ընթացքում այս հասկացությունները ծայրահեղականացվեցին: Տնտեսական և քաղաքական լիբերալիզմի գաղափարախոսները պարբերաբար առաջ եկող ճգնաժամերի հաղթահարման ուղին տեսնում էին հենց անհատի

³ Մեջբերումը Տիգրան Զարիկյանի վերլուծությունից [11]

⁴ Մինչև համավարակը նման ազդակներից նշվում էր Թրամփի պրտեկցիոնիզմը, Մեծ Բրիտանիայում Brexit-ի հաղթանակը, Ժակ Ատալեի հայացքներով դաստիարակված Էմանուել Մակրոնի C7-ի գազաթնաժողովում հնչեցրած քննադատական ելույթը՝ «Արմսթրանգի հեգեմոնիայի ավարտի» և «Ժողովրդավարության ու կապիտալիզմի ժանգոտման» մասին (Մարամասն տե՛ս [6]), Ջորջ Սորոսի անհանգստությունները, որոնք արտացոլված են նրա բավականին համարձակ վերնագիր ունեցող աշխատությունում՝ «Համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամը: Բաց հասարակությունը վտանգի մեջ է» և այլն:

իրավունքների բացարձակացման և քաղաքական կապիտալիզացման մեջ: Աստիճանաբար մարդու համընդհանուր իրավունքներից առանձնացվեցին երեխաների իրավունք, կանանց իրավունք, սեռական ու կրոնական փոքրամասնությունների իրավունք և այլ հասկացություններ: Դրանք դարձան ոչ միայն սեփական հասարակություններում քաղաքական ու տնտեսական կապիտալի իրացման թիրախներ, այլև հանդիսացան աշխարհաքաղաքական հզոր գործիքներ՝ նեոգաղութային աշխարհում վերահսկողություն իրականացնելու համար: Ստեղծվեցին զանազան կոնվենցիաներ, որոնք առաջին հերթին միտված էին սահմանափակելու երկրների պետական սուվերենությունը՝ դրանց առաձին գործառույթներ հանձնելով վերագրային կազմակերպություններին: Մշակութային լիբերալիզմը հանգեցրեց հասարակությունների վերջնական բարոյագրկման:

Առանց պատասխանատվության և վաստակի, միայն իրավունքով առաջնորդվող քաղաքացիներն ավելի ու ավելի հաճախ էին հենվում բնագոյային պահանջումների վրա՝ ձևավորելով նյութապաշտ, սպառող, պարզունակ արժեքներով բավարարվող «երջանիկ» հասարակությունների մոդելներ: Իսկ տնտեսական ու քաղաքական լիբերալիզմն անընդհատ մոդեֆիկացվում էր, որպեսզի կարողանար կերակրել իր ստեղծած «հրեշներին», և որպեսզի ինքը նույնպես վերարտադրվեր: Արդյունքում եվրոպական զարգացած, «երջանիկ» երկրներում արդեն վաղուց խախտվել էր հավասակշռությունը բժշկի և շոուբիզնեսի աստղի, արտադրողի և բանկիրի, ուսուցչի և մարքետոլոգի սոցիալական կարգավիճակների միջև:

Եթե վերը քննարկվածին ավելացնում ենք նաև բնապահպանական ոլորտում կուտակված խնդիրները, որոնք կտրուկ մեղմվեցին տոտալ կարանտինային պայմաններում, ապա գոյության իրավունք կարող է ունենալ այն պնդումը, որ այս ճգնաժամը կարող է և պետք է կատարել «սանիտարի» դեր: Իրականում այսօր ախտահարվել են Աշխարհի նկատմամբ տնտեսական, քաղաքական և սոցիալական այն պատկերացումները, որոնք իրենց սպառել են:

Այս պարագայում գալիս է գլխավոր հարցը. արդյո՞ք մարդկությունը պատրաստ է արմատապես փոխել վերը թվարկված պատկերացումները և ամբողջապես վերարժևորել սեփական ընթացքը, թե՞ առկա խնդիրներին ժամանակվոր լուծումներ կգտնվեն, և տեղի կունենա համակարգի սովորական Restart-վերագործարկում:

Դատելով առկա ազդակներից՝ իրավիճակը հուսադրող չէ: Քանի որ կրկին տնտեսական ոլորտում փորձ է կատարվում ֆինանսաբանկային համակարգի միջոցով խթանելու արհեստական սպառողականությունը, կրկին հանդուրժողականությամբ փաթեթավորված փորձ է կատարվում ձևավորել համաշխարհային տիրապետություն:⁵ Իսկ այս պարագայում ապագա համվարակային (ոչ միայն) ճգնաժամերն անխուսափելի են լինելու գուցե առավել, համատարած, առավել վտանգավոր և առավել կործանարար:

Մենք խնդրի լուծումը տեսնում ենք մեր ապրելակերպի փիլիսոփայության արմատական փոփոխության մեջ: Այսինքն՝ եկել է արմատապես Նոր Աշխարհ կառուցելու ժամանակը: Եկել է նաև որակով փոքրերի ժամանակը: Իհարկե, մարդկությունը նման գիտակցման չի կարող գալ ակնթարթորեն: Մակայն առկա և սպասվող ճգնաժամերը կստիպեն այդ փոփոխության: Հետևաբար, մենք այսօր պետք է պատրաստվենք և այսօր պետք է սահմանենք ապագա Աշխարհի նկատմամբ մեր երազը՝ «Հայկական երազը»: Իսկ վերջինս արդեն հետազոտական այլ խնդիր է, որին կանդրադառնանք այլ հոդվածի միջոցով:

МИРОВОЙ КРИЗИС. ЭПИДЕМИЯ: ПРИЧИНА ИЛИ СЛЕДСТВИЕ?

Нерсисян А. О.

В статье обсуждается характер и причинно-следственные связи мирового кризиса, существующего или возможного под влиянием эпидемии COVID-19. Были проанализированы современные политические, экономические, культурные представления о мире и возможная логика их изменения.

Предложения и заключения, полученные в результате исследования, могут быть применены в сфере государственной политики.

Ключевые слова: мировой кризис, либерализм, геополитика, геоэкономика, культуризация общества, “Новый мир”.

⁵ Բրիտանիայի նախկին վարչապետ Գորդոն Բրաունի կարծիքով՝ համավարակի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար պետք է ձևավորել Համաշխարհային կառավարություն [8]

WORLD CRISIS: EPIDEMIC-REASON OR INVESTIGATION?

Nersisyan A. O.

The paper discussed the nature and causal relationships of the global crisis that exists or is emerging from the COVID-19 epidemic. Modern political, economic, cultural perceptions of the world and the possible logic of their change were analysed.

The proposals and conclusions obtained as a result of the study can be useful and applied in the sphere of public policy.

Keywords: world crisis, liberalism, geopolitical, geo-economy, culturalization of society, "New World".

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներսիսյան Ա. «Քաղաքակրթություն» գիտական կատեգորիայի հիմունքները: Հասկացության գիտական մեկնաբանման փորձ:// ՇՊՀ Գիտական տեղեկագիր: 2017: N 1, Բ պրակ: Էջ 56-65:
2. Ներսիսյան Ա. «Քաղաքակրթություն» բուրգի ներքին կառուցվածքը:// ՇՊՀ Գիտական տեղեկագիր: 2018: N 1, Բ պրակ: Էջ 181-189:
3. Биров Э. Конец либерализма – новый мир или тупик? regnum.ru/news/polit/ (29.08.2019)
4. Гончаренко А. П. Мильные пузыри мировой эконимики. <https://cyberleninka.ru/article/n/mylnye-puzyri-mirovoy>. (04.04.2017)
5. Кузык Б. Н. Яковец Ю. В. Цивилизация: прошлое и будущее. М. Институт экономических стратегий. 2008. 576 с.
6. Макрон: «Мы определенно являемся свидетелями конца западной гегемонии в мире» (ELYSEE, Франция), <https://inosmi.ru/politic/20190828/html>. (28.08.2019)
7. IMF Managing Director Kristalina Georgieva's Statement Following a G20 Ministerial Call on the Coronavirus Emergency, <https://www.imf.org/en/News/Articles/2020/03/23>. (27.04.2020)
8. Gordon Brown calls for global government to tackle coronavirus, <https://www.theguardian.com/politics/2020/>. (08.04.2020)
9. Pueyo Tomas, Coronavirus: The Hammer and the Dance, <https://medium.com/@tomaspueyo/coronavirus-the-hammer-and-the-dance-be9337092b56> (21.03.2020)

10. Yuval Noah Harari, Does Trump's Rise Mean Liberalism's End?, *New Yorker*, <https://www.newyorker.com/business/currency/>.
(07.10.2016)
11. <https://www.facebook.com/tigran.zarikyan/posts/2856555217765768>.
(20.04.2020)

Տեղեկություններ հեղինակի մասին

Ներսիսյան Ա. Հ. – աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ armennersisyan@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 13.09.2020
Գրախոսվել է՝ 23.10.2020